ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- նոյեմբերի 2020 թվականի № Ա
ք. Երևան

«ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի սեպտեմբերի 24-ի №01-ՄՄ-12/654, հոկտեմբերի 8-ի №01-ՄՄ-12/687 և հոկտեմբերի 9-ի №01-ՄՄ-12/693 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող մանրաթելքային օպտիկական մալուխների մութ ջիլերի՝ «ՋԻԷՆՍԻ-Ալֆա» փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալությամբ հանձնման գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը,

բ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով, 2020 թվականի հոկտեմբերի 12-ի №ԳԲ/34.1-Մ6-1/4269-2020 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ ստանալու Գործարքի վերաբերյալ կառավարության դիրքորոշումը,

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2020 թվականի նոյեմբերի 2-ի №02/12.8/48588-2020 գրությամբ Հանձնաժողով ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ու էկոնոմիկայի նախարարությունների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղարի դիրքորոշումների համաձայն՝ Գործարքի մասով առարկություններ առկա չեն,

դ) Հանձնաժողովի կողմից Գործարքին համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, չի սպառնում ազգային անվտանգությանն ու պետական շահերին, և, Ընկերությանը պատկանող գույքի վարձակալությամբ տրամադրումն ունի այդ գույքը «ՋԻԷՆՍԻ-Ալֆա» փակ բաժնետիրական ընկերության կողմից հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման նպատակով օգտագործման նպատակ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող մանրաթելքային օպտիկական մալուխների մութ ջիլերի՝ «ՋԻԷՆՍԻ-Ալֆա» փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալությամբ հանձնման գործարքին:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքման ժամկետը չի կարող գերազանցել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիսը:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ.

1) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կնքելուց հետո անհրաժեշտ է երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել դրան վերաբերող փաստաթղթերի պատճենները.
2) Ընկերությունն իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- նոյեմբերի 2020թ.